

## **12.**

**ՈԱՉՄԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

### **Պահօք Զայազն**

Հրադադարի պայմաններում ապրող երկրի պաշտպանության հիմնական գրավականներից է տիրող առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը: Վերջինս ենթադրում է մեծ թվով հոգեպիս կայուն, իրավիճակին համարժեք գործելակերպի ունակ և թշնամուն հաղթելու վճռական դիրքորոշում ունեցող քաղաքացիների առկայություն: Ինչպիսի՞ն է այս տեսակետից ներկայիս հայ հասարակությունը, ինչպիսի՞ սոցիալ-հոգեբանական գործընթացներ են տեղի ունենում, առողջ է արդյոք երկրում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը: Սույն հոգվածում ուազմական հոգեբանության հրատապ խնդիրների համատեքստում մենք անդրադառնալու ենք մեր երկրում վերջին տարիներին նկատվող այն սոցիալ-հոգեբանական զարգացումներին, որոնք էապես թուլացնում են Հայաստանի պաշտպանունակությունը:

### **Աղրբեջանի հավանական ագրեսիային հասարակության հոգեպիս պատրաստ զինելը**

Այս խնդրի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ 1994 թվականի հրադադարից հետո հասարակության որոշակի հատվածն անտարբերությամբ է համակված պատերազմի վերսկսման հավանականության հանդեպ և այլևս չի ընկալում այդ վտանգը որպես այդպիսին: Ավելին, հատկապես կենցաղային մակարդակում ոմանք հուսա-

հաստ համառությամբ ժխտում են այդ վտանգը, ըստ էության ինքնախարեւության մատնելով իրենք իրենց: Այս ամենը հուշում է հասարակության մի մասի մոտ զգոնության թուլացման, ուզմական հնարավոր իրադրությանը հոգեպես անպատճառ լինելու մասին, ինչը էապես սպառնում է մեր երկրի պաշտպանունակությանը: Մինչեռ կասկածից վեր է, որ տանու տվածը ուզմական ճանապարհով ետ վերադարձնելու ուսանշխտական նպատակները դեռ երկար չեն լքելու աղբբեջանական քաղաքական շրջանակներին, ուստի Բաքվի ցանկացած ղեկավարություն միշտ պատրաստելու է բանակն ու երկիրը պատերազմի: Այս իրողությունը մեր հայրենակիցներից շատերը պարզապես չեն ընկալում:

Վերջին տասներկու տարիներին մեր հասարակությունը աստիճանաբար հարմարվեց հրադադարի պայմաններում ապրելուն: Սակայն խնդիրն այն է, որ նմանօրինակ հարմարումը ստացել է որոշակի ախտաբանական երանգ, քանզի այն արդյունք է իրականության աղճատված ընկալման: Այստեղ գործ ունենք իրականուրյան ժխտում կոչվող հոգեբանական պաշտպանական մեխանիզմի խմբային դրսևորման հետ, որը մեր հայրենակիցներից մի մասի մոտ ծայրահեղ որոշ գեպքերում՝ հիվանդագին արտահայտություններ է ընդունել: Իրականության ժխտման էությունն այն է, որ մարդ կարծես չի նկատում, չի գիտակցում իրեն սպառնացող վտանգը, ինչի արդյունքում նրա հոգեկանը գերծ է մնում տագնապից: Այս ամենը, ի վերջո, հանգեցնում է իրականությունից կտրվելուն, ստեղծված վիճակին համապատասխանող գործողություններ ձեռնարկելուն: Խսկ, ինչպես հայտնի է, թե՝ անհաստական, թե՝ խճբային մակարդակներում հոգեկան լիարժեք առողջության շափանիշը իրականության համարժեք ընկալումն ու այնպիսի գործունեության ծավալումն է, որի արդյունքում առկա պրոբլեմը լուծվում է, վտանգը՝ վերանում: Ուստի, հասարակության մեջ իրականության ժխտմամբ առաջնորդվող մարդկանց ստվար խմբի առկայությունը հուշում է այդ հասարակության՝ հոգեպես անառողջ լինելու մասին: Մեր հայրենակիցներից շատերին թվում է, որ եթե մենք չցանկանանք պատերազմ, այն չի լինի: Մենք, որ այդ հնարավոր պատերազմում հարձակման ենթարկվող և պաշտպանվող կողմն ենք լինելու՝ հակառակորդի փոխարեն վճռում ենք, որ նա մեզ վրա չհարձակվի:

Մյուս վտանգավոր դիրքորոշումը, որը նկատվում է հասարակության մի մասի շրջանում, թելաղրված է թշնամուն հաջողությամբ դիմադրելու հավանականության հանդեպ թերահավատությունից: Խոսքը սեփական ուժերի հանդեպ միանգամայն իռացիոնալ անվտանգության մասին է: Հատկանշականն այն է, որ արցախյան պատերազմի թե՛նախօրենին, թե՛սկզբում, թե՛ընթացքում և անգամ նրա հաղթական ավարտից հետո մեզանում չէին դադարում նման դիրքորոշումներ կրողների պարտվողական դատողությունները. ոմանք այդպես էլ չէին պատկերացնում, որ հայր կարող է հաղթել իրենից ավելի շատ ուսումներ և բնակչություն ունեցող Ալբրեժանին: Զէ՞ որ առ այսօր էլ արցախյան հաղթանակը, ոմանց կարծիքով, արտաքին օգնության արդյունք է: Նման դիրքորոշումը մեր էթնիկական հոգեկերտվածքում դարերի ընթացքում արմատացած ու սերնդեսերունդ փոխանցվող էթնիկական թերարժեքության դրսեորում է. կազմավորում, որը զգալիորեն կաշկանդում է ազգի դիմադրողական ներուժը: Դրա հաղթահարումը տեսական ժամանակի է պահանջում և հնարավոր է միայն այն դեպքում, եթե հայ էթնոսի կյանքում գրանցվեն ուագմական, արտաքին-քաղաքական, գիտական, մշակութային, տնտեսական և այլ կարգի նվաճումներ: Այս տեսակետից արցախյան հաղթանակը մեր հասարակության համար ունեցավ յուրահատուկ թերապետիկ ազդեցություն՝ հայ հանրության շրջանում ամրապնդեց հավատը սեփական ուժերի հանդեպ, սակայն, ցավոք՝ ոչ բոլորի մոտ:

Եշենք, որ պատերազմի հնարավորության ժիւտման, նրանում հաղթանակի հանդեպ թերահավատության դիրքորոշումները մերթ ընդ մերթ դրսեորդում են լրագրողների, հասարակական, քաղաքական գործիչների ելույթներում, հիմնականում անուղղակիորեն, ենթատեքստում, կենցաղային շփումներում: Հրադադարի պայմաններում ապրող հասարակության մի մասի մոտ անգամ նման դիրքորոշումների առկայությունը լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Հետևաբար, կազմակերպված քարոզչության անհրաժեշտություն կա՝ դրանց տարածումը կանխելու և վերացնելու նպատակով:

Այսպիսով, նման պայմաններում ռազմական հոգեբանության առջև ծառանում է հստակ խնդիր. պատրաստել հայ հասարակությանը հավանական պատերազմին՝ նրանում հաղթելու վստահություն հաղորդելով։ Վերջինս ենթադրում է մեր հասարակության շրջանում հետևյալ դիրքորոշումների ձևավորումը. առաջին՝ ռազմական գործողությունների վերսկումը մեծապես հավանական է երկրորդ՝ Ադրբեջանից գալիս է սպառնալիք, նրա թշնամական կեցվածքը կայուն է և տեսական։ Հարկավոր է հաստկապես շեշտել, որ իսուսքը մոտակա պատերազմի հավանականությամբ հասարակությանն անընդհատ, տեսական լարված անորոշության մեջ պահելու մասին չէ, ինչը լուրջ սիրեսոր է և իսկապես կարող է կազմալուծել մեր հասարակության բնականոն կենսագործունեությունը։ Խնդիրը վտանգը սթափ գնահատել կարողանալու և դրան դիմակայելուն պատրաստ լինելու մասին է։ Հենց նման պատրաստականության վիճակում է տասնամյակներ շարունակ ապրում, օրինակ՝ իսրայելյան հասարակությունը, որն իրեն ուժեղ է զգում ոչ թե պատերազմի հավանականությունը կուրորեն ժխտելով, այլ իր թշնամիների հանդեպ ռազմական, տնտեսական գերազանցություն ապահովելով։ Իսրայելի պարագայում արտաքին վտանգը ոչ թե բարոյալքում է հասարակությանը, այլ համախմբում և մորիլիզացնում է էթնոսի ուժերը, վերածում այն արդյունավետ պետական շինանարարության լուրջ խթանի։

### «Ռազմական գերազանցությամբ» հայկական հասարակությունն ահաբեկելու ադրբեջանական փորձը

Վերջին տարիներին Ադրբեջանը հետևողականորեն վարում է սեփական «ռազմական գերազանցության» մասին լայն քարոզություն։ Ադրբեջանական իշխանությունների նպատակը ակնհայտ է. ահաբեկել Հայաստանի հասարակությանը, ձևավորել հնարավոր պատերազմում մեր երկրի հաղթելու անհնարինության, մեր ուժերի շնչին լինելու մասին գաղափարը։ Փորձելով հոգեբանորեն կոտրել բարոյապես պարտության մատնել մեզ դեռ մինչև պատերազմի սկսվելը՝ Ադրբեջանում հուս ունեն հեշտացնել ռազմական հաղթանակը։ Ասվածի ակնհայտ ապացուցն է

տարբեր առիթներով՝ հնչող հայտարարությունն Ադրբեջանի ուղմական բյուզեն Հայաստանի պետական բյուզեին համարժեք դարձնելու և Հայաստանի տնտեսապես թույլ լինելու մասին<sup>1</sup>: 2006 թ. գեկտեմբերի 21-ին իշխամ Ալիկը հայտարարել է, թե տարեցտարի նախիջևանի ինքնավար Հանրապետության բյուզեն զգալիորեն գերազանցելու է Հայաստանի պետական բյուզեն<sup>2</sup>: Իրականում այս քարոզական հնարքը նախատեսված է որքան մեր, նույնքան էլ ադրբեջանական հասարակության համար, որտեղ խնդիր կա պատրաստել երկիրը «հաղթական», հարձակողական պատերազմի: Խաղմական ծախսերի կտրուկ աճը շեշտելը նպատակ ունի վստահություն հաղորդել սեփական հանրությանը:

Սակայն «ուղմական գերազանցության» մասին քարոզական հնարքը ադրբեջանական հասարակության համար լուրջ պոտենցիալ վտանգ է պարունակում և ունի թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցության հավանականություն: Դրական ազդեցությունը կարելի է տեսնել այժմ, երբ ադրբեջանական հասարակության շրջանում ամրապնդվում են ուղմամտությունը, սեփական ուժերի նկատմամբ վստահության ձեռքբերումը, մինչդեռ վտանգը զգացնել կտա իրեն հավանական պատերազմի ժամանակ: Բանն այն է, որ, բացարձակեցնելով ուղմական ծախսերի մեծացման դերը հաղթանակի ձեռքբերման մեջ, ադրբեջանական դեկավարությունը լուրում է հարձակողական պատերազմի բազում օբյեկտիվ դժվարությունների մասին, որոնք կարող են ադրբեջանական հասարակության համար լինել անսպասելի և դառնալ անհաղթահարելի: Այդ դժվարությունների մասին տեղյակ լինելը, դրանց հոգեբանորեն պատրաստ լինելը հեռացնում են ադրբեջանական հասարակությունը իրականությունից և բարոյալքման վտանգ ստեղծում արդեն դրանց հետ բախվելիս:

<sup>1</sup> Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны". – Ереван, Исследовательский центр "Регион" Журналистов-расследователей, 2005, стр. 66.

<sup>2</sup> [www.Regnum.ru/news/759197.html](http://www.Regnum.ru/news/759197.html), 20:26, 21.12. 2006.

Մեր կարծիքով, այս պարագայում միանգամայն հավանական է «ցանկալի ասեկուսեների» ֆենոմենի դրսեւորումը: «Ցանկալի ասեկուսե» հասկացողությունը գիտական շրջանառություն է ներմուծել հայ հոգեբան Հակոբ Նազարեթյանը: Այդպիսին նա անվանում է այն ասեկուսեները, որոնք արտահայտում են հասարակության ցանկությունները, նպատակները, հույսերը: Ըստ Հ. Նազարեթյանի, «ցանկալի ասեկուսեները» կարող են ցանկալի իրականության պատրանք ստեղծել հասարակության մեջ և հուսահատության, բարոյալքման հանգեցնել, երբ այդ հասարակական նպատակները շիրականանան, հույսերը շարդարացվեն<sup>3</sup>: Թեև ուազմական գերազանցության շնորհիվ հաղթանակ տանելու դիրքորոշումները Աղրբեջանում տարածվում են ոչ թե ասեկուսեների, այլ պետական կազմակերպված քարոզության միջոցով, այնուամենայնիվ, վերը նշված օրինաշափության հանդես գալու հավանականությունը դրանից շի նվազում: Ուազմական գերազանցության քարոզության արդյունքը ակնհայտ է: Նախորդ տարիների համեմատ աղրբեջանական բանակի հաղթանակին վստահ Աղրբեջանի քաղաքացիների թիվը զգալիորեն աճել է<sup>4</sup>: 2004 հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Աղրբեջանում անցկացված հարցման 1000 մասնակիցների 60,7%-ը համոզված է հավանական պատերազմում աղրբեջանական բանակի հաղթանակում: Սակայն իրերի նման դրությունը մեծացնում է նաև «ցանկալի ասեկուսեների» դրսեւորման հավանականությունը: Նշված ֆենոմենի դրսեւորման վառ օրինակ է Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1939-1940 թթ, Փրանսիական բանակի անձնակազմի բարոյալքումը: Բանն այն է, որ մոտ մեկ տասնամյակ, ընդհուպ մինչև պատերազմի սկիզբը, Ֆրանսիայում բացարձակացվում էր «Մաժենոյի գծի» նշանակությունը, այն ներկայացվում և ընկալվում էր իրեւ անձեղելի և գերմանական վտանգի հանդիման՝ հուսալի, գրեթե անհաղթահարելի պատնեշ:

<sup>3</sup> А. П. Назаретян, *Агрессивная толпа, массовая паника, слухи*, Москва, 2003, стр 95.

<sup>4</sup> Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны". – Ереван, Исследовательский центр "Регион" Журналистов-расследователей, 2005, стр 48.

պես հայտնի է, «Մաժենոյի գիծը» չկանխեց ֆրանսիայի օկուպացիան, իսկ վերջինիս շրջանցումը գերմանացիների կողմից հանգեցրեց ֆրանսիական բանակի ու հասարակության դիմադրողական ոգու անկմանը: «...Ինձ պակաս չզարմացրեց նաև ֆրանսիական դիմադրության արագ կրախը՝ ուազմաճակատի ճեղքումից անմիջապես հետո: Գերմանական ողջ շարժը իրականացվում էր գլխավոր ճանապարհներով, և ոչ մի տեղ նրանք չկանգնեցվեցին»<sup>5</sup>, - իր հուշերում նշում է Ռ. Զերշիլը:

Ուազմական մեծ ծախսերի շնորհիվ արագ և հեշտ հաղթանակը, որն այդքան էլ մոտ չէ իրականությանը, միանգամայն հավանական է դարձնում «ցանկալի ասեկուսեների» սցենարի զարգացումը՝ ինչպես ադրբեցանական բանակում, այնպես էլ հասարակության շրջանում: Սակայն մեր պարագայում նույնպես «ցանկալի ասեկուսեների» ֆենոմենին շտրվելու համար հարկավոր է պատերազմի հավանական լինելը մշտապես թարմացնել հասարակական գիտակցության մեջ: Հավանական պատերազմում հաղթելու համար հարկավոր է ոչ թերագնահատել, ոչ էլ՝ գերագնահատել հակառակորդի ուժերը: Հայկական բանակի սպայակազմը պետք է մանրամասնորեն տեղյակ լինի հակառակորդի հոգեբանական նկարագրին, որի համար պետք է ուսումնասիրել այն. ահա ուազմական հոգեբանության ևս մեկ կարևորագույն խնդիր:

### «Հայաստանցի-դարաբաղցի» դիրքորոշումները

Դիվանագիտական նկատառումներից ելնելով, Արցախի հոչակած անկախ պետականության կարգավիճակը, պարագորած կերպով, իր բացասական հոգեբանական ազգեցությունն ունեցավ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախում և հիմք դարձավ հայաստանցի-դարաբաղցի տրոհման ու դրանից բխող դիրքորոշումների ձևավորման համար: Արդյունքում՝ թե՛ Արցախում, թե՛ Հայաստանի այլ հատվածներում Արցախն իսկապես լնկալվեց «անկախ», Հայաստանից դուրս մի պետական միավոր: Այս դեպքում ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի այլ շրջան-

<sup>5</sup> Ս. Չերչիլ, *Вторая мировая война*, т. 2, Москва, 1998, стр. 37.

ների բնակչության մոտ առկա են ազգային ինքնագիտակցության խորքային փոփոխություններ: Մասնավորապես, արցախցիների մոտ հայ ազգի հետ սեփական նույնացմանը աստիճանաբար փոխարինում է ղարաբաղցի հանրութին նույնացումը, այսինքն՝ նոր, հայ էթնոսից դուրս գտնվող ղարաբաղցու խմբային ինքնագիտակցություն է ձևավորում: Իսկ Հայաստանի տարբեր շրջաններում, ընդհակառակը, ղարաբաղցիներն աստիճանաբար չեն ընկալվում սեփական՝ հայ էթնիկական հանրութի մեջ, այլ դիտվում են որպես նրանից դուրս մի յուրահատուկ հանրութի:

Հայաստանցի-ղարաբաղցի դիրքորոշումները պառակտող բնույթուննեն և Հայաստանի պաշտպանունակության համար խիստ վտանգավոր են: Հայաստանցի-ղարաբաղցի պառակտումը պետք է հաղթահարել ներքին և արտաքին տարբերակված քարոզությամբ՝ թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում քարոզելով «մեկ ազգ, մեկ հայրենիք» դիրքորոշումը՝ ամրապնդելով Հայաստանի տարբեր շրջանների բնակչության մոտ մեկ ընդհանրական՝ հայկական ինքնագիտակցությունը: Գուգահեռաբար հարկավոր է համոզիչ կերպով ՀՀ բնակչությանը ներկայացնել, որ երկրի քաղաքական, տնտեսական ոլորտներում արցախցիների դերի մասին պատկերացումները շափազանցված են, և միտումնավոր շահարկվում են մի շարք ուժերի կողմից:

### Թշնամուց ելնող վտանգի հանդեպ գգոնության նվազում

Ժամանակակից հայ հասարակության խմբային ինքնագիտակցության մեջ թշնամու հանդեպ առողջ պաշտպանական ագրեսիայի նվազելու միտում է նկատվում, որի օբյեկտիվ պատճառը պատերազմում հաղթանակ տանելն է: Առողջ պաշտպանական ագրեսիան ենթադրում է հայրենիքին սպառնացող թշնամուն դիմադրելու և հաղթելու դիրքորոշում, ինչն իրական վտանգին դիմակայելու հոգեբանական պատրաստվածության, վճռականության վիճակ է ստեղծում այն կրողի մեջ: Տանամյակներ շարունակ խորհրդային իրականության մեջ թշնամու հանդեպ ագրեսիվ դիրքորոշումը բացահայտ արտահայտելն անհնարին էր: Արդյունքում՝ այն կուտակվելով, ժայթքեց արցախյան ազատագրական

պայքարի ընթացքում և հաղթանակից հետո կարծես պարպվեց: Ներկայումս թշնամու կերպարի հանդեպ առողջ պաշտպանական ագրեսիան մղված է հետին պլան: Այն ակտիվանում է և համակում հայ հասարակության, հատկապես երիտասարդության գիտակցության ոլորտը՝ թշնամու հերթական վայրագությունից (օրինակ՝ Բուդապեշտում հայ սպայի սպանությունից) հետո, ապա կրկին նվազելու միտում է հանդես բերում: Ցանկացած պահի, երբ ադրբեջանական կողմից մեզ սպառնացող վտանգն ավելի առարկայական, իրական դառնա, ներկայիս հայ հասարակության ենթագիտակցական մակարդակ մղված առողջ պաշտպանական ագրեսիան կակտիվանա՝ դառնալով ավելի տեսանելի և վառ արտահայտված: Թերեւս հենց այս տեսակետից էլ հարկավոր է բացատրել այն իրողությունը, որ մայրաքաղաքի բնակչության մոտ ադրբեջանցիների հանդեպ ագրեսիայի մակարդակն ավելի ցածր է, քան սահմանամերձ շրջաններում: Երևանում պատերազմի վտանգը չի զգացվում, այն աշքի առջև չէ: Ադրբեջանցու կերպարը մայրաքաղաքի բնակչի համար մի տեսակ անորոշ է և հստակ է դառնում վայրագությունից-վայրագություն: Մինչդեռ պատերազմ տեսած սահմանամերձ շրջանների բնակչության պատկերացումները ադրբեջանական զինուժի մասին ավելի իրատեսական են և հիմնված են ոչ վաղ անցյալի իրադարձությունների հուշերի վրա:

Այսպիսով, ուազմական հոգեբանության կարևոր խնդիրներից է կառավարելի դարձնել թշնամու հանդեպ հայ հասարակության մոտ պաշտպանական ագրեսիայի նվազման ինքնաբերական գործընթացը՝ ձևավորելով ու պահպանելով ադրբեջանական պետության և հատկապես նրա բանակի հանդեպ իրականությանը համարժեք պատկերացում: Թշնամուն միայն իբրև թշնամի ընկալելով կարելի է նրանից հաջողությամբ պաշտպանվել՝ արագ հակազդելով նրա ոտնձգություններին: Հակառակ պարագայում, ադրբեջանական կամ թուրքական ցանկացած վայրագություն մեզ համար կլինի անսպասելի, հետեւաբար, կորուստներն էլ՝ մեծ:

**Թշնամու հանդեպ հանդուրժողականության քարոզչությունը  
և «Թուրքը փոխվել է» դիրքորոշումը**

Մեր պետության անվտանգությանն էապես սպառնում են վերջին տարիներին որոշ հասարակական, քաղաքական գործիչների, լրագրողների ակնհայտ պարտվողականությամբ, ստրկամտությամբ հագեցած հրապարակային ելույթներն ու հրապարակումները: Վերջիններիս կողմից հետեղղականորեն տարվում է ադրբեջանցու, թուրքի հանդեպ հանդուրժողականության քարոզչություն: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ որոշ լրագրողներ, հասարակական, քաղաքական գործիչներ կարծես վերածված լինեն Հայաստանում թուրքական քաղաքականության խոսափողի: Ընդ որում, որոշակի ժողովրդականություն վայելող լրատվամիջոցներ բացահայտ հակապետական, ապազգային դիրքորոշումները հանրության լայն խավերի ուշադրությանը ներկայացնում են իշխանությունների օրյեկտիվ քննադատության ֆոնի վրա: Արդյունքում՝ բացահայտ հակապետական բովանդակությամբ նյութն ընդհանուր ընդդիմադիր բովանդակության տեղեկությունների համատեքստում կլանվում է բնակչության կողմից: Մի շարք հասարակական կազմակերպություններ, բնակ շթաքցնելով այդ նպատակով իրենց՝ արտերկրից դրամաշնորհ՝ ստանալու փաստը, բացահայտ պացիֆիստական և ադրբեջանցիների, թուրքերի հանդեպ հանդուրժողականություն ձևավորելուն ուղղված քարոզչություն են ծավալում: Հանդուրժողականության վերը նշված պարզունակ, մակերեսային քարոզչությանը զուգահեռ, այս ուժերի կողմից հետեղղականորեն տարածվում է Արևմտյան Հայաստանն անդառնալիորեն կորցրած լինելու, նրա՝ հայկական պետականության կազմի մեջ երեսէ ընդգրկվելու անհնարինության, նրա ազատագրման անիրական, զուտ պատրանքային լինելու գաղափարը: Ընդ որում՝ նման դիրքորոշումները, որպես կանոն, հիմնավորվում են թուրքական ռազմական հզորությամբ, որը ներկայացվում է իբրև անհաղթահարելի մի ուժ: Ներկայիս հայատյաց թուրքիայի դեմ պայքարը ներկայացվում է որպես անհեռանկարային, որով պատմա-

կան հայրենիքի ազատագրության գաղափարը վարկաբեկվում է: Դրան գուգահեռ փորձ է արվում վարկաբեկել, թունոտ որակումներով բացասական հասարակական կարծիք ձևավորել այն հայրենասիրական ուժերի մասին, ովքեր իրականությանը համարժեք՝ որպես թշնամական պետություններ են ընկալում Աղբեցանն ու Թուրքիան:

Հանդուրժողականության այս անառողջ, այլասերված դրսևորման ակունքներում հարկավոր է տեսնել «թուրքը փոխվել է» դիրքորոշումը, որը նկատելի է նաև կենցաղային շփումներում: Մեզանից ոմանք այն կարծիքին են, թե այսօրվա թուրքը 1915 թվականի թուրքը չէ, թե չի կարելի դառնալ «պատմության գերին», պետք է հաղթահարել հնացած ու կարծր դիրքորոշումները, մոռանալ ցեղասպանության մասին և թուրքերի հետ բարեկամանալ՝ լընկալելով նրանց իրեւ թշնամի: Կարծես թե ասվածի շարունակությունն է որոշ ուժերի կողմից եղեռնի միջազգային ճանաշման, դատապարտման և հետևանքների հաղթահարման գաղափարի, Արցախյան հիմնախնդրի վարկաբեկումը:

Հարկավոր է նշել, որ կենցաղային մակարդակում Մեծ եղեռնի ճանաշման խնդիրը երբեմն զուգորդվում է տնտեսական դժվարությունների հետ, և դրանից բնակչության դժգոհությունը նրանց մի մասի մոտ փոխանցվում է Մեծ եղեռնի ճանաշման գաղափարի վրա: Արդյունքում՝ մեզանում երբեմն նկատվում է մի դիրքորոշում, թե ներկայիս սոցիալական ճգնաժամը նորօրյա եղեռն է: Եղեռնի հետ կապված մյուս կենցաղային վտանգավոր դիրքորոշումն այն է, թե վերջինիս միջազգային ճանաշման համար տարվող պայքարը իրականում ֆինանսական փոխհատուցման համար է, որից սակայն շատերին ուղղակի օգուտ չկա:

Կենսամակարդակի անկման հետևանքով ժողովրդի դժգոհությունը փոխանցվել է նաև Արցախի հիմնախնդրի վրա: Վերջին տարիների սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառը ոմանք նույնացնում են արցախյան ազատագրական պայքարի հետ, ինչի հետևանքով Արցախն ընկալվում է իրեւ «քավության նոխագ», երկրում առկա բոլոր դժվարությունների մեջավոր: Արդյունքում՝ Արցախի ազատության համար պայքարելու գաղափարը նախկին ոգևորությունը չի առաջացնում

մեզանում: Առհասարակ, ներկայիս հայ հասարակության մեջ առկա է անտարբերություն ազգային նպատակների հանդեպ: Սակայն երկրի անվտանգությանը էապես սպառնում է այն, որ որոշ ուժեր փորձում են ավելի սրել այս դիրքորոշումները, ժողովրդական դժո՞հություններին տեղի տալով և՝ միտումավոր կերպով ուղղորդելով դրանք Արցախի հիմնախնդրի վրա: Մասնավորապես հենց այդ միտումն է նկատվում որոշ լրատվամիջոցներում կասկածելի հետևողականությամբ բարձրացվող այն հարցադրման մեջ, թե «Արցախի հիմնախնդրը Հայաստանի տնտեսական զարգացման խոշնդոտ է»: Ակնհայտ է, որ այստեղ միակողմանիորեն շափազանցված է արցախյան հիմնախնդրի բացասական ազդեցությունը Հայաստանի տնտեսական զարգացման վրա: Ակնհայտ է նաև այն, որ այս դեպքում գործ ունենք երկրի բնակչությանը հակարցախյան դիրքորոշումներով ստերեոտիպացնելու, մասնավորապես արցախյան հիմնախնդրի վերաբերյալ պաշտոնական Բաքվի դիրքորոշումները մեզանում ընդունելի դարձնելու փորձի հետ: Այդ նույն ուժերը մեզանում հետևողականորեն փորձում են եղեռնի ճանաշումը ներկայացնել լոկ որպես սփյուռքահայության խնդիր, որը հայաստանաբնակների հետ որևէ կապ չունի: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ եղեռնի խնդրի բարձրացնելը ավելի է լարում հայ-թուրքական հարաբերությունները, որ վերջիններիս հետ նորմալ հարաբերություններ ունենալու համար հարկավոր է դադարել ընկալել թուրքին իբրև թշնամի՝ շգրգուելով նրան եղեռնի խնդրով:

Ի դեպ, «թուրքը փոխվել է» դիրքորոշումը նկատելի էր հայ հասարակության մոտ նաև երիտթուրքերի ու նաև քեմալականների իշխանության գալու ժամանակ: Ավելին, թուրքահաճող դիրքորոշումներ եղել են նաև Մեծ եղեռնի նախօրեին, երբ հայերի մի որոշակի շերտ համոզված էր երիտթուրքերի քաղաքակիրթ լինելու մեջ: Ինչպես շատերն այսօր, այն ժամանակ էլ նրանք կարծում էին, թե սուլթան Արդուլ Համիդի տիրապետության դժնդակ ժամանակներն այլևս անցյալում էին, կարծում էին, որ «թուրքը փոխվել է», չեին հավատում սպասվելիք իրադարձու-

թյունների հնարավորությանը<sup>6</sup>: Բացի այդ, տասնիններորդ դարի վերջի և քսաներորդի սկզբի Արևմտյան Հայաստանում ծավալված ազատագրական պայքարի ողջ ընթացքում հայ հանրության շրջանում կայուն տեղ ուներ այն դիրքորոշումը, թե պետք չէ դիմադրել թուրքին, թե դա գրգռում է նրան և զարդերի պատճառ դառնում: Մինչդեռ, ինչպես այն ժամանակ, այնպես էլ այսօր, թուրքի փոխվելու, նրան դիմադրելը շարդերի պատճառ համարելու դիրքորոշումն ընդամենը ինքնախարենություն է, իրականության ժխտման վրա հիմնված հոգեբանական ինքնապաշտպանական բարդույթ, ցանկալին իրական համարելու պարզունակ մղում: Այն թեև տվյալ պահին բավականաշափ հանգիստ ու լարվածություններից զերծ է դարձնում իրադրության ընկալումը, սակայն հանգեցնում է զգոնության կորստի, օբյեկտիվ իրողությունների խեղաթյուրված ընկալումների և էապես թուլացնում է ազգի հոգեբանական պաշտպանվածությունը՝ դրանից բխող հետևանքներով:

«Թուրքը փոխվել է» դիրքորոշման հիմքում հարկավոր է տեսնել ևս մեկ հոգեբանական պաշտպանական մեխանիզմ. նույնացում ագրեսորի հետ: Այս կապակցությամբ հիշատակենք հայ հոգեբան Ա. Նալշաջյանի տեսակետը: Բանն այն է, որ փոքր ազգի ներկայացուցիչ լինելը, փոքրիկ հայրենիք ունենալը որոշ անհատների խորը ենթագիտակցական թերարժեքության պատճառ է դառնում, քանզի ենթագիտակցական մակարդակում նրանք իրենց անապահով, անպաշտպան են զգում<sup>7</sup>: Արդյունքում՝ նրանց ենթագիտակցականը «գտնում է ելքը». դա անապահովության զգացումը փարատելու համար ագրեսորի հետ նույնանալու ձանապարհն է:

Դա է պատճառը, որ թշնամու հանդեպ ոմանց հանդուրժողականության կոչերը համեմված են դժվար քողարկվող թրքասիրությամբ: Այս դեպքում, դաժանությունն ընկալելով իրու հզորությունն, թուլակամու-

<sup>6</sup> Կ. Նալշաջյան, Ցեղասպանությունը որպես հոգեբանական ֆենոմեն, / Հայոց Մեծ եղեռն/ Երևան, 2005, էջ 347

<sup>7</sup> А. Налчаджян, Этническая характеристология, Ереван, 2001, стр. 419.

թյունից դրդված, մեզանից ոմանք ենթագիտակցաբար նույնանում են թշնամու հետ՝ իրենց զգալով իբրև նրանց մի մաս: Իրենց պատկերացնելով ուժեղի հետ և այդպես հաղթահարելով թշնամուց վախը՝ ոմանք աստիճանաբար համակրանքով են լցում թուրքի հանդեպ: Իրենց ուժեղի մի մաս համարելով, այս մարդիկ իրենց ավելի պաշտպանված, ապահով են զգում: Նշենք, որ դավաճանության հոգեբանական պատճառներից մեկը հենց նույնացումն է ագրեսորի հետ: Ագրեսորի հետ հոգեբանական նույնացման ենթագիտակցական ծուղակում հայտնվելն է պատճառը, որ որոշ թրամաեր քաղաքական ու հասարակական հայ գործիչներ, կարծես հանդես գալով թուրքական պետության դիրքերից, մեզ մեղադրում են մեր ողբերգությունների համար, կոչ անում «մոռանալ» պատմությունը: Ընդ որում, նրանց կողմից հնչեցվածն իրատեսական քննադատություն չէ, այլ սեփական ազգի նսեմացում, թշնամուն դիմադրելու գաղափարի ժխտում, թուրքիայի հանդեպ խոր համակրանքի սերմանում: Այս մարդիկի վիճակի շեն իրատեսորեն ընկալել այսօրվա թուրքիան, Աղրբեջանը և վերջիններիս ուժեղ ընկալելով՝ ի գորու չեն համարում իրենց՝ դուրս գալ նրանց դեմ և պաշտպանել սեփական պետության շահը: Նրանք խուճապի են մատնվում, երբ իրատես գործիչները թուրքիան և Աղրբեջանը որակում են իբրև թշնամի պետություններ, որովհետև այդպիսով կորցնում են իրենց ներքին խոացիոնալ ապահովության զգացումը, որին հասել էին թուրքական էթնիկական հանրույթի հետ հոգեբանորեն նույնանալու շնորհիվ: Այս մարդկանց խուճապի է մատնում այն իրականության գիտակցումը, որ թշնամին մեզ ատում է այն պարզ պատճառով, որ մեր պապերը հազարամյակներ շարունակ ապրել են այս երկրում, քաղաքակրթություն ստեղծել: Ցավոք, այդպիսի խոացիոնալ դիրքորոշումները հաճախ ստանում են ուղղակի ֆինանսական աջակցություն, մասնավորապես արևմտյան դրամաշնորհների միջոցով:

Այսպիսով, ակնհայտ է, որ թուրքիայի, Աղրբեջանի հանդեպ նման այլասերված, պարտվողականությամբ և փոքրոգությամբ հագեցված հանդուրժողականության կոչերը բթացնում են մեր հասարակության զգոնությունը, անպատրաստ դարձնում նրան ապագայում պաշտպան-

վելու ագրեսիայից: Հարկավոր է տարբերել առողջ հանդուրժողականությունը այն ստրկամտությունից, որը մեզ է մատուցվում հանդուրժողականության անվան տակ:

Բանն այն է, որ ազգերի միջև փոխհարաբերությունները պայմանավորված են փոխադարձ էթնիկական ընկալումներով: Վերջիններս ուղեկցվում են համեմատության գործնթացով, ինչի արդյունքում էթնոսի հոգեկերտվածքում ձևավորվում է դիրքորոշումների համակարգ՝ ինչես իր, այնպես էլ այլ էթնոսների մասին: Այլ էթնոսի մասին դիրքորոշումների համակարգը նրա հետ փոխհարաբերությունների տարբեր պատմական ժամանակահատվածներում բնորոշվում է ագրեսիայի տարբեր մակարդակներով, որն իր հերթին կախված է երկու էթնոսների միջև շահերի հակասությունից կամ համընկնումից: Ըստ այդմ, էթնոսների միջև փոխհարաբերությունները բնորոշվում են համագործակցությամբ, մրցակցությամբ և կոնֆլիկտով<sup>8</sup>: Համագործակցության դեպքում առկա է հանդուրժողականություն. Էթնոսները ընկալում են միմյանց կամ չեզոք՝ գրեթե զերծ ագրեսիվությունից, կամ իբրև բարեկամներ: Շահերի հակասության և մրցակցության դեպքում միմյանց մասին էթնոսների դիրքորոշումները հագենում են ագրեսիվությամբ, որն իր գագաթնակետին է հասնում շահերի բախման՝ կոնֆլիկտի դեպքում: Ժամանակակից հոգեբանության բնագավառում, ագրեսիա ասելով, հասկանում են վարքի ցանկացած ձև, որն ուղղված է որևէ մեկին ֆիզիկական կամ հոգեբանական վնաս հասցնելուն: Ագրեսիան մարդկային էության անբաժանելի մասն է հանդես է գալիս ինչպես անհատական, այնպես էլ խմբային մակարդակներում: Հենց վերջինիս տարատեսակներից է էթնիկական ագրեսիան: Էթնոսն ամբողջությամբ, ըստ Ա. Նալշաշյանի, ագրեսիվ հոգեվիճակում է հայտնվում այն դեպքում, երբ նրա բազմաթիվ անդամների պահանջմունքների բավարարման ճանապարհին հանդիպում են անհաղթահարելի թվացող արգելքներ, ինչի արդյունքում նրանք միաժամանակ հայտնվում են զրկվածության հոգեվի-

<sup>8</sup> А. Налчаджян, Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, 2000.

ճակում: Որպեսզի այդ առանձին անհատների ագրեսիան դառնախմբային, Ա. Նալշաջյանի կարծիքով, նրանք պետք է հաղորդակցվեն և նույնանան մեկը մյուսի հետ՝ այդ կերպ միմյանց փոխանցելով իրենց հոգեվիճակը: Մրանից հետո է միայն մեծանում խմբային ագրեսիվ գործողությունների դիմելու հավանականությունը<sup>9</sup>: Այս տեսակետից միշտնիկական հարաբերություններին բնորոշ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարեկամ, մրցակից, հակառակորդ, թշնամի, միմյանցից տարբերվում են շահերի բևեռացվածության, իրարամերժ լինելու և ագրեսիվ տարբերով հագեցած լինելու մակարդակով: Հայ-ադրբեցանական, հայ-թուրքական շահերի ծայրահեղ բևեռացված և իրարամերժ լինելը օբյեկտիվ հիմք է ստեղծում փոխադարձ թշնամական (այլ ոչ թե՝ հակառակորդ կամ մրցակից) ընկալման համար:

Հայ-ադրբեցանական փոխհարաբերություններում ագրեսիայի նվազմանը և հանդուրժողականության ձևավորմանը էապես խոշնդրություն է 1994 թ-ի հրադադարից առ այսօր Ադրբեցանում տարվող ուսանողական, ամեն հայկականի հանդեպ կույր ատելություն սերմանող քարոզությունը, որի արդյունքն է ներկայիս Ադրբեցանի հայատաց քաղաքական վերնախավը, մտավորականությունն ու հատկապես երիտասարդությունը<sup>10</sup>: Ասվածը հաստատում է ադրբեցանցի քաղաքագետ Արիֆ Ֆունուսովը, երբ նշում է, թե սխալ է կարծել, որ ռազմամոլ հռետորությունը ծավալվում է միայն իշխանությունների կողմից, իսկ ադրբեցանական հասարակության մեծամասանությունը խաղաղության կողմնակիցն է<sup>11</sup>: Արհամարհանք, ցասում և ատելություն. ահա հայերի և Հայաստանի հանդեպ ադրբեցանցիների մեծամասնության վերաբերմունքը<sup>12</sup>: Այս ֆոնի վրա մեզանում հնչող հանդուրժողականության կոչերը,

<sup>9</sup> Ա. Նալշաջյան, կինիկական հոգեբանություն, Երևան, 2001, էջ 121:

<sup>10</sup> Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны". – Ереван, Исследовательский центр "Регион" Журналистов-расследователей, 2005- стр 40, 46.

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 45:

հիրավի, զավեշտական են, քանի որ ապրում ենք մեր հանդեպ թշնամաբար տրամադրված ազգի կողքին. իրողություն, որի արհեստականորեն մեղմացումն առնվազն ինքնախաբեություն է: Ինչ խոսք, ոչ բոլոր աղբեջանցիներն են ատելությամբ համակված մեր հանդեպ: Սակայն հենց իրենց՝ աղբեջանցիների բերած տվյալները, որոնց համաձայն նրանց ճնշող մեծամասնությունն ատում և արհամարհում է մեզ, միանգամայն բավական են աղբեջանական հասարակությանը իբրև թշնամի որակելու համար: Այս ամենին գումարվում է նաև այն, որ Հայաստան-Հայրենիքի մասին մեր էթնոսի պատկերացման անբաժանելի մաս կազմող որոշ տարածքներ գենու Աղբեջանի կազմում են գտնվում: Այս իրողությունները մի քանի տասնամյակով ետ են գցում երկու ժողովուրդների հոգեկերտվածքում փոխադարձ հանդուրժողականության ձևավորումը:

### Ագրեսիվությունը որպես թուրքական եթենիկական բնավորության կայուն գիծ

Ժամանակակից էթնոհոգեբանական պատկերացումների համայն ագրեսիվությունը կարող է դառնալ էթնիկական բնավորության համակարգի մի մաս: Էթնոսներն իրենց ծագման և հետագա զարգացման ընթացքում ձեռք են բերում մեծ խումբ կազմող հոգեկան հատկություններ, որոնք փոխկապակցված են և ներկայացնում են ամբողջական մի համակարգ: Հենց դա էլ հոգեբաններն անվանում են էթնոսի հոգեբանական կերտվածք: Վերջինիս կարևորագույն բաղադրիչներից է էթնիկական բնավորությունը, որը «ազգի կենսագործունեության մշակութային ու սոցիալական պայմաններին անհատական և խմբային հարմարման արդյունք է: Այն ներառում է բնորոշ հարմարվողական բարդությներ և ուղարկած ազգավարություններ: Բնավորության բարդությը մի շարք գծերի կայուն զուգորդություն է, որը հանդես է գալիս իբրև միասնական որակ և անձի մեջ ստեղծում է կենսական բնորոշ պայմաններում որոշակի ձևով գործելու կայուն միտում»<sup>13</sup>: Նշենք, որ աղբեսիայի դրսերում-

<sup>13</sup> Ա. Նալշաշյան, էթնիկական հոգեբանություն, Երևան, 2001, էջ 121:

ների այս կամ այն շափով կարելի է հանդիպել ցանկացած էթնոսի հոգեկերտվածքում։ Մակայն ազրեսիվության մակարդակով էթնոսներն էապես տարբերվում են միջանցից։ Այսօր արդեն հոգեբանների համար ակնհայտ է, որ գոյություն ունեն առավել կամ նվազ ազրեսիվ էթնոսներ։ Ազրեսիվությունը կարող ենք համարել էթնիկական բնավորության կայուն գիծ այն դեպքում, երբ այն միտում ունի պարբերաբար արտահայտվել կրկնվող, նույնաբնույթ պատմական իրադարձություններում։ Այսինքն, «էթնոսի ազրեսիվության մակարդակը կարելի է որոշել նրա պատմության, կենսագործունեության ընթացքում ազրեսիվ վարքի կրկնությունների հաճախականությամբ, որն այս դեպքում վերածվել է միջավայրի պայմաններին դարերով մշակված հարմարման մեխանիզմի»<sup>14</sup>։ Թուրքերը, աղրբեջանցիները պատկանում են հենց ալղպիսի էթնիկական հանրությունը կրկնվելու միտում ունի վերջիններիս պատմության ողջ ընթացքում և դրսերդվում է առ այսօր՝ կասեցնելով հայի հանդեպ հանդուրժական դիրքորոշումների ձևավորումը։

Քոչվորական անցյալն իր անդառնալի դրոշմն է թողել թուրքական էթնիկական հոգեկերտվածքի վրա՝ ավերելու, քանդելու և ոչնչացնելու ներքին մղման տեսքով։ Ֆիզիկական ազրեսիայի այս դրսեորումները դարերի ընթացքում կրկնվող պատմական իրադրություններում պարբերաբար վերարտադրվելով՝ արմատացել են և վերածվել թուրք-աղրբեջանական էթնիկական բնավորության կայուն, պարբերաբար կրկնվելու միտված գծի։ Թուրք-աղրբեջանական էթնիկական ազրեսիան ցանկացած պահի կարող է ժայթքել՝ հանգեցնելով նախկին քոչվորի հարևանությամբ ապրող ավելի քաղաքակրթված ազգերի զարհուրելի շարդի։ Զկա թուրքին հարևան այնպիսի մի ազգ, որն իր մաշկի վրա զգացած շինի թուրքական ազրեսիվության ողջ ավերիչ ուժը։ Թուրքական հոգեկերտվածքում ազրեսիվության բարձր մակարդակը միանգամայն հնարավոր ու հավանական է դարձնում թուրքերի դաժանություն-

<sup>14</sup> Նույն տեղում։

ների պողմաներն ապագայում ևս: Ազգային բնավորության կայուն և խոր գիծ լինելու հանգամանքով միայն կարելի է բացատրել այն փաստը, որ 68 տարի ինտերնացիոնալիզմի քարոզության պայմաններում, ընդհանուր խորհրդային երկրում ապրող ազրբեջանցի-թուրքերը, 1988 թին Սումգայիթում «անսպասելիորեն» դրսևորեցին իրենց հոգեկանի խորքերում դարան մտած կործանարար ագրեսիվության ողջ պաշարը:

Թուրքի շփոխվելու, նույնը մնալու հիմնական ապացուցներից է այն, որ ներկայիս թուրքերի գերակշիռ մեծամասնությունն իր պապերի կատարած ոճիրի համար չունի մեղքի, ամոթի բարոյական ապրումներ: Մեղքի, ամոթի ապրումների համար հարկավոր է բարոյական հասունություն, իսկ վերջինիս համար ազգը պետք է բնականոն էվոլյուցիոն ճանապարհ անցնի: Ուստի միանգամայն հիմնավոր են ենթադրությունները թուրքական էթնիկական միավորի բարոյական տհասության մասին, որը խտացված ձևով արտահայտվում է նրանց պետական քաղաքականության մեջ: Զմոռանանք, որ թուրքական միասնական էթնոսի կայացման գործընթացն իր ավարտին գեռես չի հասել<sup>15</sup>: Ավելին, ժամանակակից թուրքիայի տարածքում նախորդ գարի 60-ական թթ. կային գեռես նստակացության շանցած, միասնական թուրքական ազգի մեջ շինտեգրված յուրցուքների և թուրքմենների ցեղախմբեր, որոնք իրենց այդպես էլ անվանում էին և իրենց թուրք չեին համարում<sup>16</sup>: Իսկ էթնիկական խմբի բարոյական տհասությունը խիստ վտանգավոր է, քանի որ, ինչպես նշում է Ա. Նալչաջյանը, այն կարող է պատճառ դարոնալ ծայրահեղ անհամուրժականության, վանդալիզմի հասնող ազրեսիվության դրսևորումների. երկույթներ, որոնք, ինչպես վերը նշեցինք, անընդհատ ուղեկցել են թուրքիայի և Աղրբեջանի գոյության պատմությունը և բնորոշ են թե՝ թուրքին և թե՝ ալբրեջանցուն առ այսօր: Զուղայի խաչքարերի բարբարոսական ոչնչացումը, դրա համար ամոթի, մեղքի զգացում շապրելն այդ տհասության ակնհայտ վկայությունն է: Ո՛չ թուրքական, ո՛չ

<sup>15</sup> А. Налчаджян, Этногенез и ассимиляция, Ереван, 2003, стр 43.

<sup>16</sup> Երեմեև Գ. Ե., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 285:

աղբբեջանական հասարակություններն ինքնամաքրման ուղին տակավին չեն բռնել: Ընդհակառակը, այսօրվա թուրքը, ցեղասպանության վերաբերյալ հանդես է բերում ազրեսիվ գիրքորոշումներ. կամ չի թաքցնում իր գոհունակությունը կատարվածի համար (հատկապես կենցաղային կամ ոչպաշտոնական շփումներում), կամ, անհրաժեշտության գեպքում, շրջապատին ներկայանում է իբրև հայերի բռնության գոհ, կամ էլ ուղղակի ժխտում է կատարված իրողությունը: Զնայած այս գիրքորոշումների տարբերությանը, դրանք բոլորն էլ ունեն մեկ ընդհանություն. երեքն էլ հագեցված են ազրեսիայի անուղղակի գրաւորումներից մեկով՝ ցինիգմով, քանի որ թուրքական հասարակությունը, առանձին բացառություններով, չի զղջում իր պատերի կատարած ոճիրի համար: Ավելին, թուրքն այսօր պակաս ազրեսիվ չէ հայերիս հանդեպ, քանզի ցեղասպանության ճանաշման և հատուցման համար պայքարող հային նաընկալում է իբրև իր կենսական շահերի իրականացման ճանապարհին խոշնողությունը՝ վտանգ զգալով անկախ Հայաստանի գոյությունից: Ակնհայտ է, որ եթե թուրքն իր մեղքը չի ընդունում, ապա երկու ազգերի միջև թշնամանքի խորացումն ու երկուառեք մեկուսացումն անխուսափելի է:

Թուրքի շփոխվելու, նույնը մնալու ևս մեկ ապացուց: Ներկայիս հանրապետական թուրքիայի պետական գաղափարախոսությունը՝ քեմալիզմը, իր բնույթով ծայրահեղ ազգայնամոլական (շովինիստական) է, քանի որ բացառում է Թուրքիայի տարածքում այլ ազգերի գոյության իրավունքը: Ինչպես հայտնի է, շովինիզմը ծայրահեղ ու ազմատենչ ազգայնամոլությունն է, որը կարող է դառնալ գաղափարախոսության, ըստ այդմ նաև՝ քաղաքականության հենք և, ի տարբերություն ազգայնականության, ենթադրում է մեկ ազգի բացառիկություն (ընտրյալ լինելը), որն, իբրև թե կոչված է գերիշխելու այլ՝ ոչ լիարժեք ազգերին ու ուսաներին: Ազգայնամոլությունը «արդարացնում է տնտեսական էքսպանսիան, քաղաքական ճնշումը, մշակութային գերակայությունը և հասարակության մեջ բորբոքում է թշնամանք ու ատելություն»<sup>17</sup>: Ազգայ-

<sup>17</sup> Военный энциклопедический словарь, т. 2, Москва, 2001, стр 763.

նամոլական դիրքորոշումը բարդ ներքին կառուցվածք ունի, ուր իրենց կայուն տեղն ունեն ծայրահեղ էթնոցենտրիզմը և քսենոֆոբիայի հասնող էթնիկական անհանդուրժողականությունը: Ունենալով ապակառուցողական բնույթ, ազգայնամոլական դիրքորոշումը տևական ու կայուն լինելու պարագայում, հանգեցնում է այլ էթնոսների նկատմամբ ագրեսիվության պոռթիկումների:

Դաղտնիք չէ, որ բազմազգ թուրքիայի պետական գաղափարախոսության առանցքը միատարր ազգային պետականության ստեղծումն ու պահպանումն է: Ուստի պատահական չէ, որ ժամանակակից թուրքիայում պետական մակարդակով շի ընդունվում, ժիտվում է ազգային փոքրամասնությունների (քրդեր, լազեր, վրացիներ, հայեր, արաբներ) գոյությունը: Զէ՞ որ գեռ բոլորովին վերջերս թուրքական իշխանությունը քրդերին կոչում էր «լեռնային թուրքեր»<sup>18</sup>: Այս ամենից մեզ համար ամենակարևոր հետեւությունն այն է, որ էթնիկ միատարրություն քարոզող գաղափարախոսության առկայությունը ոչ միայն շի նպաստում թուրքական ազգեսիվության նվազմանը, այլև ավելի է ամրապնդում այն նորանոր սերունդների հոգեկանում: Թուրքական ազգեսիվության նվազման համար անհրաժեշտ է, որպեսզի թուրք էթնիկ հանրույթը տևականորեն ապրի, զարգանա հանդուրժողականության վրա հիմնված արժեքային համակարգում:

Իսկ որքանո՞վ է իրատեսական թուրքիայում նման արժեքային համակարգի ձևավորումը մոտ ապագայում: Զէ՞ որ թուրքական հասարակությունը կատաղի կերպով ընդդիմանում է եվրոպական ազատական արժեքների մուտքին թուրքիա. արժեքներ, որոնք արմատապես հակասում են քեմալիզմին, այն գաղափարախոսությանը, որի ներքնայնացմամբ հասունացել են թուրք սերունդներ և որը խթանել է թուրքերի՝ որպես միասնական ազգի ձևավորմանը: Թուրքիան եվրոպականացնող Քեմալ Աթաթուրքը թուրքական իրականություն ներմուծեց եվրոպական մշակույթի, քաղաքական համակարգի որոշ տարրեր միայն: Սա-

<sup>18</sup> А. Налчаджян, Этногенез и ассимиляция, Ереван, 2003, стр 114.

կայն ներկայիս թուրքական հասարակությունում անգամ դրանցից հեռանալու և մարմեղական արմատականության վերածննդի միտում է նկատվում: Ասվածի ակնհայտ վկայությունը եվրոպիություն-թուրքիա ծանր բանակցություններն են: Թուրքական էթնոցենտրիզմի և դրա վրա հիմնված ու միմյանց հաջորդող գաղափարախոսությունների՝ պանթուրքիզմի ու քեմալիզմի արմատները թուրքական հոգեկերտվածքում այնքան խորն են, որ եվրոպայում ազատական արժեքային համակարգում ձևավորվող թուրք նոր սերնդի մոտ նույնիսկ չեն մեղմվում, ուր մնաց թուրքաբնակ թուրքերի մոտ: Մի կողմ թողնելով աննշան բացառությունները, իրողությունն այն է, որ թուրք էմիգրանտը եվրոպական դասական ժողովրդական հանրություն տեսական ազատական արժեքների ազդեցության տակ, չի ներքնայնացնում դրանք, ակուլտուրացիայի չի ենթարկվում: Ասվածի ակնհայտ վկայությունն է եվրոպայի թուրքական գաղթօջախներում ծայրահեղ ազգայնամոլական «Գորշ գայլեր» քաղաքական կազմակերպության վայելած մասսայականությունը<sup>19</sup>: Հատկանշականն այն է, որ հյուրընկալող երկրի արժեքային համակարգի հանդեպ թուրքի անհանդուրժողականությունն ինքնատիպ կերպով դրսեռքում է իրենց մասին Միջին արևելքի և Անդրկովկասի մի շարք ժողովուրդների պատկերացումներում, ըստ որի թուրքը քրիստոնյայի տանը առաջին օրը համեստ հյուր է, երկրորդ օրը՝ ընտանիքի հավասար անդամ, երրորդ օրը նա վոնդում է տան տերերին և տիրանում նրանց տանը<sup>20</sup>: Ասվածը կարելի է համարել թուրքական ձևավորվող ազգի էթնիկական բնավորության բնորոշ գիծ, որը միտված է կրկնվելու նրա ձևավորման ողջ ընթացքում և դրսեռքում է առ այսօր՝ հիմքում ունենալով դարերով քոչվորական կենսակերպ վարելուց բխող հոգեբանական առանձնահատկությունները և էթնոցենտրիզմը: Այս ամենը, ինչպես նաև թուրքերի ա-

<sup>19</sup> Մ. Բոլտոն, *Короли диверсий*, Москва, 2001, стр. 287:

<sup>20</sup> Ա. Նալչաճյան, *Этническая характерология*, Ереван, 2001, стр. 267.

բագ բազմանալը, հյուրընկալող երկրի թրքացման լուրջ վտանգ է պարունակում, մանավանդ, որ «չեվրոպականացված» թուրքերը վերջին շրջանում ձգտում են եվրոպական մի շարք երկրներում բարձրացնել իրենց խմբային էթնիկական կարգավիճակը, ինչը տեղացիների հետ բախումների պատճառ է դառնությունը<sup>21</sup>: Եվրոպաբնակ թուրքերի շեվրոպականանալու պատճառների թվում պետք է նշել նաև եվրոպական և թուրքական մշակույթների խորը տարրերությունը և դրանով պայմանավորվող անհամատեղելիությունը, ինչպես նաև թուրքական պետության գոյության փաստը: Այնպես որ, թուրքին դեռ շատ երկար է բնորոշ լինելու էթնոցենտրիզմն ու նրանով պայմանավորված նվաճողական-կործանարար ազրեսիան: Թուրք ազգի էթնոքաղաքական ընդհանուր միտումների, նպատակագրումների և սոցիալական դիրքորոշումների մեջ որևէ շրջադարձային փոփոխություն չի գրանցվել, ինչի հետևանքով այսօր էլ հայն ու Հայաստանը կրկին շարունակում են ընկալվել իբրև սպառնալիք կամ, քեմալականների բնորոշմամբ, «կովկասյան արգելք»<sup>22</sup>: Թուրքական հայատյացությունն իր բացահայտ դրսեորումն է ստանում մամուլում: Այսպես. «Օրթագողու» թերթի 2000 թ. սեպտեմբերի 25-ի համարում հայերին անվանել են «շներ», որոնց պետք է «դաստալ»:<sup>23</sup> Թուրք քաղաքական վերնախավի թշնամանքը համընդհանուր բնույթ է ստացել: 2005 թ., թուրքական կառավարության որոշմամբ, Արևմտյան Հայաստանում տարածված մուֆլոնների «վայրի հայկական քարայծ» լատիներեն ընդունված անվանումը փոփոխվում է, «Անատոլիայի վայրի քարայծ» անվանմամբ: Թուրք շինուվները դա բացատրում է նրանով, որ «որոշ անձինք փորձում են օգտա-

<sup>21</sup> Ա. Նալշաջյան, «Էթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 218:

<sup>22</sup> Է. Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և դաշնակիցները, Երևան, 1997, էջ 18:

<sup>23</sup> «Ազգ» օրաթերթ, 14 հոկտեմբերի, 2004թ.:

գործել մեր ֆառւնայի ներկայացուցիչների անվանումները՝ շեշտելու համար, թե այստեղ հայեր են ապել»<sup>24</sup>:

Հենվելով էթնոգենեզի ընթացքում ազգի հոգեկերտվածքում փոփոխություններ տեղի ունենալու համար ժամանակային և այլ բնույթի գործուների առկայության անհրաժեշտության վրա, պետք է արձանագրել, որ ներկայիս թուրքը պակաս ագրեսիվ է, քան իր ոչ վաղ անցյալի եղեռնագործ նախնին, նա նույնն է մնացել և անգամ ավելի հավակնությունությունությունների վերաբերյալ: Ցանկացած էթնոսի հոգեկերտվածքը կայուն հոգեբանական կազմավորում է, որը ձևավորվել է նրա տեսական պատմական զարգացման, այլ էթնոսների հետ պարբերական փոխհարաբերությունների ընթացքում, հետեւաբար նրանում լուրջ փոփոխություններ արագ տեղի չեն ունենում: Հոգեբանական ակնհայտ օրինաշափություններ գոյություն ունեն, որոնք չի կարելի հաշվի շառնել. թշնամական դիրքորոշումները ժամանակային տեսակետից խիստ կայուն են<sup>25</sup>: Անհրաժեշտ են տեսական ժամանակահատված, նպաստավոր սոցիալ-հոգեբանական պայմաններ, որպեսզի էթնոսի հոգեկերտվածքի առանձին բաղադրիչներ փոփոխվեն: Մասնավորապես հարյուրամյակների նստակյաց կենսակերպ վարելուց հետո միայն նախկին քոչվորական ցեղախմբերի միավորումը՝ թուրք էթնիկական հանրույթը, բարոյապես կհասունանա, ինչն էլ իր հարևանների հանդեպ կայուն հանդուրժողականության արմատավորման նախադրյալ կհանդիսանա: Թուրքերին բնորոշ էթնոցենտրիզմը բնավ չի թուլացել այլ ավելի ամրապնդվել է: Անպես որ, շարաշար սիմալվում են նրանք, ում թվում է, թե ցեղասպանությունը մոռանալով ու թուրքահաճո կեցվածք ընդունելով, կարելի է «նվաճել թուրքերի սերը»:

Ներկայումս անհնարին է նաև որևէ մեկի քաղաքական ու ուսումնական ազգեցության ներքո հայ-աղբբեջանական փոխադարձ հանդուրժողականության դիրքորոշումների ձևավորումը: Պատճառները գրեթե

<sup>24</sup> "Новое время", 8 марта, 2005г.:

<sup>25</sup> К. Изард, Психология эмоций. СПб., 1999, стр. 399-401:

նույնն են, միայն այն տարբերությամբ, որ արյունահեղ հակամարտությունից համեմատաբար քիչ ժամանակ է անցել: Ոչ վաղ անցյալի պատերազմի հիշողությունները թարմ են՝ հետեւաբար բարձր է նաև հայերիս հանդեպ ագրեսիվության մակարդակն աղբբեշանցիների դիրքորոշումներում: Որոշ բացառություններ են նկատվում արտերկրում բնակվող աղբբեշանցիների մոտ: Արտերկրում երբեմն նկատելի է հայ-աղբբեշանական համագործակցություն՝ իրատեսական շահի հիման վրա, որի արդյունքում ագրեսիան երկուատեք մեղմվում է, արտամղվում է ենթագիտակցական մակարդակ, սակայն չի վերանում: Սրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ արտերկրում թե հայերը, թե աղբբեշանցիները օտարի կարգավիճակում են և առնչվում են միևնույն խնդիրների հետ, ինչը միավորում է նրանց: Սակայն միանգամայն այլ են հոգեբանական պայմաններն Աղբբեշանում, ուր պարտվելու գործոնը, ուեանջի գաղափարի վրա հիմնված ռազմամոլ քարոզությունը հանգեցում են աղբբեշանցիների կողմից ծայրահեղ, հաճախ իրացիոնալ աղբեսիվության պոռթկումների: Ասվածի վառ օրինակն է Գուրգեն Մարգարյանի կացնահարումը, երբ ողջ երկրում առանձին անձինք միայն դատապարտեցին մարդասպան Ռամիլ Սաֆարովին: Ի՞նչ հանդուրժողականության մասին կարող է լինել խոսքը, երբ աղբբեշանական հանրությը հավակնություններ ունի անգամ Հայաստանի Հանրապետության այս մի պատառիկ մնացած հողի նկատմամբ՝ այն անվանելով իբրև «Արևմտյան Աղբբեշան»: Բնդ որում՝ այս ծավալապաշտական դիրքորոշումները հնչում են նաև պետական ամենաբարձր մակարդակով<sup>26</sup>: Հայատյացու-

<sup>26</sup> Նախագահ Հ. Ալիկի այդպիսի ելույթների մասին տես՝ A. Aivazian, "Possible Solutions for the Nagorno-Karabagh Problem: A Strategic Perspective," in Levon Chorbajian, ed., *Making a State: From Secession to Republic In Nagorno-Karabagh*, (New York: St. Martin's Press, 2001), pp. 207-209: Աղբբեշանի ներկա պաշտպանության նախարար, գեներալ Սաֆար Աբիկը հայտարարում է, թե ,Հայկական պետությունը ստեղծվել է օկուպացված աղբբեշանական հողերի վրա և որ աղբբեշանական բանակը ,կարող է անցնել երևանից այն կողմեց: Խսկ Աղբբեշանի պաշտպանության նախարարության խոսնակ գնդապետ Ռ. Մելիքովն ասում է բառացիորեն հետևյա-

թյան վառ ապացուցը Զուղայի խաչքարերի ջախջախումն է, որի նպատակը նախիջևանին հայկական դիմագծից զրկելն է: Զէ՞՞որ այս բարբարոսությունը կատարում էր ոչ թե խաժամուժը, այլ ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումը: Ընդ որում ադրբեջանական այս վայրագությունն ադրբեջանական քաղաքականության անբաժան ուղեկիցն է: Զօռանանք, որ 1991 թ. հունվարի 22-ին Ադրբեջանի կառավարությունը «որոշում է կայացրել ոչ միայն արգելել Արցախում հայ եկեղեցու գործունեությունը, այլև վերացնել Գանձասարի և Ամարասի վանքերը»<sup>27</sup>: Բոլորովին վերջերս իշխամ Ալիկը հանձնարարել է Ադրբեջանի գիտությունների ակադեմիային ապացուցել, թե իբր հայերը Արցախում եկվորներ են<sup>28</sup>: Ինչպես տեսնում ենք, կրկնվում է նաև այլոց մշակութային ժառանգության յուրացման և պատմությունը կեղծելու ադրբեջանա-թուրքական քաղաքականությունը: Այսինքն, այսօր նույնպես այն ամենը, ինչ օտար է թուրք-ադրբեջանցիներին՝ կամ յուրացվում է կամ, եթե այդ անելն անհնարին է մշակութային ակնհայտ տարբերության պատճառով, ոչնչացվում: Ադրբեջանցու պատկերացումներում մենք այս տարածաշրջանում պարզապես գոյություն չունենք: Սա այն ամենաչական գործոնն է, որը ներկայումս անհնարին է դարձնում հանդուրժողական գիտակցության ձևավորումը: Հանդուրժող ադրբեջանական հասարակությունը

լր. «Առաջիկա 25-30 տարում Հարավային Կովկասում Հայկական պետություն չի լինի: Այդ ազգը գլխացավանք է եղել իր հարևանների համար և իրավունք չունի ապրելու այս տարածաշրջանում: Այսօրվա Հայաստանը ստեղծված է պատմական ադրբեջանական հողերի վրա: Ես հավատում եմ, 25-ից մինչև 30 տարում այդ տարածքները նորից կփերադառնան Ադրբեջանի իշխանության ներքու (տե՛ս Ա. Այվազյան, «Հայագիտությունը որպես ինքնապաշտպանական համակարգ ու դիմադրության անհամաշափ միջոց»). – 21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, № 3 (9), 2005, էջ 144, ծնթ. 3:

<sup>27</sup> Ա. Նալշաջյան «Եթնիկական հոգեբանություն», Երևան, 2001, էջ 137:

<sup>28</sup> Ա. Նալշաջյան, Սպասվող զիջումներ և վտանգ ազգային ինքնագիտակցության համար. - Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Խմբ. Այվազյան: Երևան, 2006, էջ 50:

պատրանք է, անուրջ: Աղբբեջանական վայրագություններին, հախուռն ագրեսիվությամբ հագեցված կուր ուսանշխատական կոչերին հանդուրժողականության քարոզով պատասխանելը ծիծաղելի է, զավեշտական:

Հարց է առաջանում. հանդուրժե՞նք թշնամու վայրի անհանդուրժողականությունը մեր հանդեպ, նրա կողմից մեր իսկ հայրենիքում մեր ապրելու իրավունքը չընդունելը, համապարփակ ատելությունն ամեն հայկականի, հայի տեսակի հանդեպ առհասարակ: Հիմնվելով ագրեսիայի ասպարեզում ժամանակակից հոգեբանության ձեռքբերումների վրա վստահորեն կարող ենք ասել, որ զո՞հի խաղաղասիրական կեցվածքը ոչ միայն առնվազն հեգնանք, ծաղր, քամահրանք է առաջացնում ագրեսորի մոտ, այլև ավելի է ուժեղացնում նրա ագրեսիվ մղումները, առավել ես, եթե ագրեսորն ավելի ուժեղ է և չի զղում իր կամ իր նախնիների կատարածի համար<sup>29</sup>: Պատահական չէ, որ թշնամին նման հանդուրժողականության կոչերը, հայի խաղաղասիրական կերպարն ընկալում է իրբեկ թուլություն: Պատմական փաստերը, ի դեպ, ցույց են տալիս, որ թուրքական վայրագությունների առաջին զո՞հերը եղել են հե՞նց այս դիրքորոշումն ունեցողները: Հենց նման անփառունակ վախճան ունեցան, օրինակ 1920 թ. Կարսի անկումից հետո մի շարք հայ կոմունիստներ, որոնք թուրքի մեջ բոլցելի, սոցիալիստ էին որոնում: Դավաճանելով հայրենիքին, նրանք հայտնվեցին թուրքի կողքին, լայն քարոզություն ծավալելով, թե թուրք սոցիալիստները դաշնակների դեմ են կովում, այլ ոչ թե՝ հայ ժողովրդի դեմ: Պատահական չէ, որ հե՞նց նրանք եղան «բոլցելի», «հեղափոխական» թուրքի յախաղանի առաջին զո՞հերը: Հատկանշականն այն է, որ հայ բոլցելիները Հայաստանի Հանրապետության դեմ նման քարոզություն իրականացնում էին Աղբբեջանի կոմկուսի հանձնարարությամբ<sup>30</sup>:

<sup>29</sup> Խալչաջյան Ա. Этнопсихологическая самозащита и агрессия, Ереван, 2000, стр. 276, 278.

<sup>30</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 510:

### Հայաստանում եհովականության տարածումը

Վերջին տարիներին մեր երկրում իր դիրքերն է ամրապնդում օտարամուտ, պետականության հիմքերը խարխլող, բացահայտ հակաբանակային դիրքորոշումներ քարոզող «Եհովայի վկաներ» աղանդը: Ակնհայտ է, որ վերջինիս տարածումը լիովին համարունչ է թե թուրքական, թե ադրբեջանական շահերին: Պակաս վտանգավոր չէ նաև «Եհովայի վկաներ» աղանդի շահերի պաշտպանությամբ զբաղվող և դրամաշնորհներով վարձված մի շարք հասարակական կազմակերպությունների լորփիստական ցանցի ստեղծումը:

Եհովականության լայն տարածման հիմնական նախադրյալներն են. սոցիալ-տնտեսական ճգնաժամը, վերջինիս հետևանքով հաճախակի դարձած մարդկանց հոգեբանական ճգնաճամը, բացասական սթրեսորների ազդեցության տակ առաջացած հասարակական ներոտիզացիան: Եհովականության տարածումից Հայաստանի պաշտպանունակությանը սպառնում է երեք հիմնական վտանգ:

Առաջինը. այս աղանդը վտանգում է պետական անվտանգությունը, բանակում ծառայել ցանկանալու դիրքորոշումներ տարածելով, կայուն հակաբանակային գանգված ստեղծելով:

Երկրորդ վտանգն ավելի հեռահար է, այն է. քայլքայել հայ էթնիկական ինքնազիտակցությունը, թուլացնել այն, Հայաստանում ձևավորել ազգային ինքնազիտակցությունից զուրկ, ազգային նպատակների հանդեպ անհաղորդ, անտարբեր զանգված: Սա հայ էթնոսը պառակտելու, հետևաբար նաև՝ Հայաստանը միատարրությունից զրկելու փորձ է, քանզի էթնիկական միատարրությունն այնքան ծագումնաբանորեն տվյալ ազգին պատկանելը չէ, որքան սեփական էթնոսի հետ հոգեբանորեն նույնացված լինելը և, ըստ այդմ, նրա կենսական շահերը իբրև սեփականը դիտելը: Եհովականությունն օտարում է իր անդամին սեփական

Է. Զոհրաբյան, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և դաշնակիցները, Երևան, 1997, էջ 180, 210, 261:

ազգից, նրա կրոնից՝ վարկաբեկելով համազգային նպատակները, և տարածելով անդեմ աշխարհաքաղաքացիություն:

Սակայն «ԵՇՈՎԱՅԻ ՎԼԿԱՆԵՐ» աղանդի քայլայիշ գործունեության վտանգավորությունը չի սահմանափակվում միայն վերը նշվածով: Մեր հասարակության ժողովրդավարացման անվան տակ ներմուծվում է աղանդ, որը ոտնահարում է քաղաքացիների հիմնարար իրավունքները: Մարդու իրավունքները բացահայտորեն խախտվում են, երբ անհեթեթ դոգմաների հետևողական ներշնչմամբ մարդկանց արգելվում է արյան փոխներարկումը, ինչի պատճառով վտանգվում է նրանց կյանքը: Բացի այդ, աղանդում տևականորեն ներգրավված մարդուն չի կարելի համարել հոգեպես առողջ, նրանց հոգեկան ակտիվությունը չի համապատասխանում հոգեկան առողջության ընդունված շափանիշներին: Անձի իրավունքների խախտումն արդեն սկսվում է աղանդում ներգրավելու փորձ կատարելու պահից: Աղանդավորները հոգեորսության նպատակով օգտագործում են հոգեբանորեն գրագետ մեխանիզմներ: Աղանդներում ներգրավվելու հիմնական հոգեբանական նախադրյալը մարդու հոգեպես թուլացած, խոցելի լինելն է, ինչը հետևանք է տևական բացասական սթրեսի ազդեցության: Դա գիտակցելով առաջին շփման ընթացքում աղանդավորները մարդու մոտ ստեղծում են հոգեկան հենարանի զգացում՝ իրենց բարեհամբույր վերաբերմունքով: Այնուհետև գործի է դրվում աստիճանական ներգրավման մեխանիզմը, ինչի արդյունքում մարդն ակամա ներքաշվում է աղանդավորական խմբի մեջ: Օգտագործվում է նաև աղանդի ներսում առաջխաղացման և դիրք ունենալու մեխանիզմը, երբ արդեն խորապես ներգրավված մարդուն թույլ է տրվում քարոզել, մի բան, որ աղանդի աստիճանակարգում բարձր դիրք ունենալու նշան է: Մարդն այդ կերպ ինքնահասատավում է, քանզի կարևոր ու բարձր դիրք է ստանում, այսպիսով բավարարելով մարդ արարածին բնորոշ գերակայության ձգտումը: Վերջինս ավելի գայթակղիշ է աղանդում խորապես ներգրավվածի համար, քանի որ նա հանդես է գալիս ճշմարտություն կրողի, տարածողի դերում. այն ճշմարտության, որին, իր կարծիքով, հասու չեն այլոք և որոնց լուսավորելու առաքելությունն ին-

քը պետք է կատարի: Որքան ավելի խորն է մարդ ներգրավվում աղանդում, որքան ավելի է նա հոգեբանորեն նույնանում աղանդավորական հանրույթի հետ, այնքան ավելի է թուլանում նրա էթնիկական ինքնագիտակցությունը, այնքան ավելի է նա օտարվում ընտանիքից, հարազատներից, մտերիմներից, սեփական ազգային հանրույթից: Աղանդում ներգրավված մարդու հոգեկանում ընթանում են ախտաբանական խորը փոփոխություններ: Աստիճանաբար քայլայվում է ողջ անձնային համակարգը, ձևախեղվում է արժեքային համակարգը, նրա գիտակցությունը դառնում է կառավարելի աղանդավորների կողմից, մարդը կորցնում է իր ինքնությունը, օտարվում, մեկուսանում է հասարակությունից: Աղանդում ներգրավվածի մոտ բթանում է իրականության ընկալումը, մտածողությունը դառնում է խիստ սահմանափակ ու ստերեոտիպ: Աղանդում ներգրավվելու սկզբնական շրջանում մարդու մեջ գերակշռում է հրապուրանքը, նորույթի, հետաքրքրության, եթե հոգեկան խորը ճգնաժամի մեջ էր՝ փրկվածության զգացումը, նրա հոգեվիճակը սկսում է լավանալ այսինքն նկատվում է որոշակի թերապևտիկ արդյունք: Սակայն սա ընդամենը շատ վտանգավոր հոգեբանական ծովակ է: այն շատ խարբուսիկ է կարճատե, և հենց այստեղ է քողարկված մարդու հոգեկանին սպառնացող վտանգը: Ներգրվելոց քիչ անց արդեն տվյալ անձի ներհոգեկան պրոբլեմն ավելի է խորանում և սկիզբ են առնում հոգեախտաբանական գործընթացներ անձի համակարգի ամենակենտրոնական կառուցյի՝ ինքնագիտակցության համակարգում, որոնք ընթանում են աստիճանաբար և աննկատ մարդու համար: Հոգեկանի ախտաբանական փոփոխությունները վարքային տեսակետից սկզբում կարող են աշքի զարնող զինել, սակայն դրանք ներգրավման խորացմանը զուգահեռ դառնում են բացահայտ: «Եհովայի վկաներ» աղանդն իր դոգմաների ներշնչմամբ խորացնում է իր անդամների հոգեկան ճգնաժամը, որի պատճառը երբեմն լինում է ինքնասպանությունը:

Հատուկ նշենք. աղանդավորների գործունեությունն ընդհանուր ոչնչ չունի ոչ ժողովրդավարական արժեքների, ոչ հատկապես խղճի աշտության հետ: Այդ առաջադեմ գաղափարների անվան տակ աղանդ-

ներն ընդամենը վարպետորեն քողարկվում են՝ վարկաբեկելով դրանք: Աղանդը քայլայում է ինչպես մարդու անձը, այնպես էլ հասարակությունը: Հետևաբար, պայքարը եհովականության և այլ աղանդավորական հոսանքների հակապետական ու հատկապես հակաբանակային քարոզչության դեմ, դրանց շեզոքացումը մեր պետության առջև ծառացած առաջնահերթություն է: Ընդ որում, պայքարում պետք է ներգրավեն նաև Հայաստանում ժողովրդավարական, առողջ հասարակություն ունենալու խնդրով շահագրգոված հասարակական կազմակերպությունները: Այդ նպատակով նախևառաջ հարկավոր է կանխել աղանդում մարդկանց ներգրավումը: Հարկավոր է հանրությանը իրազեկել աղանդում ներգրավվելու հետևանքով հոգեկանի փոփոխությունների մասին, այն մասին, որ աղանդը խախտում է իրենց և իրենց մերձավորների իրավունքները: Բայց ամենակարեւոր խնդիրը պետք է լինի օգնել աղանդում ներգրավվածներին՝ վերաինտերվելու հասարակության մեջ: Պետք է հաշվի առնել, որ շատ ավելի հեշտ է վերականգնել այն մարդկանց առողջ կենսագործունեությունը, ովքեր դեռ նոր են ներգրավվել աղանդում: Եվ ընդհակառակը, հատկապես դժվար են ընթանում հոգեկարգավորման գործընթացներն այն մարդկանց հետ, ովքեր ներգրավվել են աղանդի մեջ մանուկ հասակում, պատաճեկության տարիներին: Եվ թերևս, ամենակարեւորը. պատժամիջոցներն այս խնդրում պարզապես անհրաժեշտ են, սակայն դրանք պետք է վերաբերեն աղանդավորական հոսանքների պարագլուխներին՝ ցիսիկ հոգեորսներին, մարդու իրավունքների պաշտպանության անվան տակ արտերկրից կառավարվող հասարակական կազմակերպությունների ղեկավարներին: Վերջիններս իրենց ներկայացնելով յուրաքանչյուրիս իրավունքների պաշտպան, իրականում դրամաշնորհով կաշառվելով՝ ուղղակիորեն նպաստում են մարդկանց իրավունքների խախտմանը՝ հոգեւոր և ֆիզիկական առողջության քայլաբացմանը, և Հայաստանի պաշտպանուակության թուլացմանը: Ընդգծենք. պատիժները չպետք է վերաբերեն աղանդում հայտնված քաղաքացիներին, ընդհակառակը, նրանք պետության և հասարակության հոգածության կարիքն ունեն:

### Ամփոփում

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, ընդգծենք ամենակարևոր հետևողությունը. թուրքի կերպարը չի փոխվել և չի կարելի տրվել նրա՝ ժամանակակից դառնալու մասին խարկանքին: Իրողությունն այն է, որ մենք ստիպված ենք հարաբերություններ հաստատել ոչ թե «փոխված», «քաղաքակրթված», այլ սովորական, հայերիս թշնամի ընկալող թուրքի և մեր հանդեպ տոտալ ատելությամբ համակված ադրբեջանցու հետ: Հետևաբար, հանդուրժողականության անառողջ, այլասերված կոչերը մեզանում միայն բթացնում են հասարակության զգոնությունը, կոտրում ազգի դիմադրողական կորովք: Ուժեղ լինելով միայն կարելի է խոսել թուրքի, ադրբեջանցու հանդեպ հանդուրժողական լինելու մասին: Միայն ուժեղ հայի հանդուրժողականության կոչը, խաղաղասիրական կեցվածքը կարող է ընկալվել իբրև այդպիսին: Թուրքը, ադրբեջանցին մեզ պետք է ընկալեն ուժեղ, սեփական հողը պաշտպանելուն ունակ և իրենց հավասար հակառակորդ, հաշվի նստեն մեզ հետ: Արցախյան պատերազմից հետո այս դիրքորոշումներն ադրբեջանական հասարակության մեջ արդեն ստեղծված են. այն հարկավոր է միայն ամրապնդել՝ վերջնականորեն արմատախիլ անելով խեղճ, զանգվածային կոտորածի ենթակա հայի կերպարը: Հակառակ դեպքում ցեղասպանության մեծ ու փոքր գրսելորումները կլինեն հայերիս մշտական ուղեկիցը:

Ազրբեջանցու, թուրքի հանդեպ իրական, առողջ հանդուրժողականության ձևավորումը հնարավոր է մի շարք նախապայմանների գեպքում միայն: Մասնավորապես, կայուն ագրեսիվ-ազգայնամոլական նկարագիրը ունեցող թուրքիայի հետ փոխհարաբերությունները պետք է կառուցվեն հստակ, առանց ինքնախաբեռության, ձկուն կողմնորոշվելով փոխադրձ շահերի մեջ: Թուրքիայի հետ պետք է հարաբերվել առանց իրադրական, տնտեսական շահը համազգային-կենսականին հակադրելու: Անընդունելի է թուրքիայի հետ հարաբերությունները պատկերացնել միմիայն Արևմտյան Հայաստանն անդառնալիորեն կորցրած լինելու փաստի հետ համակերպվելու պայմանով: Աս հենց այն է, ինչ ուզում է

թշնամին: Ինչ խոսք, Արևմտյան Հայաստանի ազատագրումն այսօրվա խնդիր չէ և միանգամայն օբյեկտիվ հանգամանքներից ելնելով Հայաստանի արտաքին քաղաքականության այսօրվա առաջնահերթույնների թվում չէ: Սակայն երկարաժամկետ ապագայում Արևմտյան Հայաստանի ազատագրման հեռանկարը միանգամայն իրական է: Վերջինիս նախադրյալներն են Հայաստանի հզորանալը, բազմազգ թուրքիայի հնարավոր մասնատման հեռանկարը, հարևան երկրների հետ նրա կենսական շահերի բախումը, քրդական դիմագրությունը, ներկայումս թուրքիայում վերածնվելու նշաններ ցուց տվող պանթյուրքիզմի նվաճողական բնույթի վտանգավոր լինելը իրանի, Ռուսաստանի, Զինաստանի համար, աշխարհի բազմաբևեռ դառնալու հեռանկարը, որն անխուսափելիորեն հանգեցնելու է պետությունների սահմանների փոփոխությանը: Ուստի սերունդների գիտակցության մեջ ամեն կերպ հարկավոր է վառ պահել հայրենիքի բռնազավթած լինելու և այն ապագայում ազատագրելու գաղափարը:

Նույնը կարելի է ասել նաև Աղրբեջանի պարագայում: Հանդուրժողականությունը չի կարող ձևավորվել հենց այնպես. հարկավոր է վերացնել երկու ազգերի միջև թշնամանքի պատճառը: Աղրբեջանի հետ ներկայումս սառեցված էթնոքաղաքական<sup>31</sup>, տարածքային հակամարտությունը արցախահայերի պարագայում ունի ազգային ազատագրական պայքարի բնույթ: Համաշխարհային փորձը ցուց է տալիս, որ ազգային ազատագրական պայքարի բնույթը ունեցող էթնոքաղաքական հակամարտություններն ունեն միայն երկու հնարավոր լուծում: Նախկինում իշխող կողմը վաղ թե ուշ հրաժարվում է իր նվաճողական նկրտումներից, ընդունում մյուսի ինքնուրույն ապրելու իրավունքը: Եվ

<sup>31</sup> «Էթնոքաղաքականությունը նույն արժեքների համար էթնուսների (ազգերի) միջև մղվող պայքարն է, մրցակցությունը, իսկ երբեմն էլ որոշ ազգերի համագործակցությունը՝ մյուսների դեմ հանուն իշխանության և ազգեցության ոլորտների հաջողությամբ պայքարելու համար»: Տես՝ Ա. Նալշաջյան, «Էթնիկական նորերանություն», Երևան, 2001, էջ 245:

կամ՝ կատարվում է էթնիկական գտում ու ցեղասպանություն։ Միջանկալ լուծումներ այստեղ չեն լինում։ Առաջին լուծումից հետո միայն նախկին թշնամիների միջև վերանում է թշնամանքի պատճառը, այնուհետև նախկին հակամարտությունն աստիճանաբար վերածվում է հիշողության, առաջ են մղվում փոխահավետ համագործակցության նկատումներ։ Այսօր Մեծ Բրիտանիան և Հնդկաստանը հաջողությամբ համագործակցում են, իսկ հնդիկի ընկալումներում անգլիացին այլևս ագրեսոր, գաղութարար չէ։ Երկու ազգերի միջև թշնամանքի էջը շրջված է, քանի որ Բրիտանիան հրաժարվել է իր գաղութարար նկրտումներից։ Այդպես էլ ադրբեջանական հանրությում պետք է հասունանա խնդրի լուծման ռազմական ուղղու անհեռունկարային լինելու համագմունքը։ Իսկ դրա համար ադրբեջանական հասարակությունը պետք է խորապես ըմբռնի մեր ռազմական հզորության իրողությունը։ Արդյունքում Արցախի հանդեպ գաղութարարական-նվաճողական դիրքորոշումներն աստիճանաբար կմարեն։ Ադրբեջանական հասարակությունն աստիճանաբար կհամակերպի Արցախն Ադրբեջանի կազմում շինելու իրողության հետ։ Այս գեպքում միայն ադրբեջանցիների հաջորդ սերդի մոտ աստիճանաբար կարող է ձևավորվել հայի հանդեպ հանդուրժողականություն, հետևաբար նաև բնականոն համագործակցություն։ Սա ցավոտ գործընթաց է և կարող է տևել շատ երկար։ Այս փուլով են անցել բոլոր գաղութային կայսրությունների հասարակությունները նախկին գաղութների անկախացումից հետո։ Օրինակ 20-րդ դարի 40-ական թթ. վերջին Բրիտանական կայսրության փլուզումը բրիտանական հասարակության համար ծանր հոգեբանական փորձություն էր, որին լիարժեքորեն համակերպվել է բրիտանացիների նոր սերունդը միայն։ Ադրբեջանական դիրքորոշումներում նմանօրինակ խորքային փոփոխությունները միայն հնարավոր կդարձնեն հայերի հանդեպ հանդուրժողականության ձևավորումը։ Իսկ ահա հայ հասարակության մեջ ադրբեջանցու հանդեպ համարժեք հանդուրժողականություն կառաջանա միայն ադրբեջանական հասարակության դիրքորոշումների նման խորքային ձևավոխմանն ի պատասխան։ Մինչդեռ այսօր Ադրբեջանում հայի հանդեպ

հանդուրժողականություն չկա և մոտ ապագայում չի էլ նշմարվում: Ավելին, նկատվում է հակառակ միտում: Զինադադարին հաջորդած տարիները կարող էին նպաստել թշնամանքի մեղմացմանը, եթե շիներ Աղբեջանում տարվող ուազմամոլ-ուսանշխտական քարոզությունը, որը հետաձգում է հանդուրժողականության ձևավորումն անորոշ ժամանակով: Այս պարագայում մեզանում ադրբեջանցիների հանդեպ ագրեսիվ գիրքորոշումները կարող են առաջին պլան մղվել կամ թուլանալ, սակայն լրիվ վերանալ չեն կարող՝ քանի դեռ կա տարածքային խնդիր: Ներկայումս, առանց իրականության սկզբունքի առջև մեզանշելու հարկավոր է ադրբեջանական հանրույթը որակել որպես թշնամական, միաժամանակ հանդուրժելի համարելով նրա ապրելու, պետություն ունենալու, մշակույթ զարգացնելու իրավունքը, սակայն ոչ մեր պատմական հայրենիքի տարածքի վրա, ոչ մեր քաղաքակրթությունը ոչնչացնելու, բնիկներին սրի քաշելու կամ մշակութային կողոպուտի գնով:

Ի դեպ, հատկանշական մի փաստ: Ադրբեջանցիները հրաժարվում են համագործակցել միջազգային կառույցների հետ այն դեպքերում, երբ դա հակասում է իրենց պետական շահերին, ինչը չի կարելի ասել մեզանում գործող մի շարք կազմակերպությունների մասին, որոնք վերածվել են գերտերությունների ձեռքին խամաճիկների: Այսպես աղբեջանցի հոգեբան Ազադ Խազաղեյի վկայությամբ, իրենք ժամանակին հրաժարվել են համագործակցել մի արտասահմանյան կազմակերպության հետ ադրբեջանցի «փախստական» երեխաների հոգեբանական վերականգման շուրջ, քանի որ դրան զուգահեռ խնդիր էր դրված նաև վերացնել հայերի հանդեպ թշնամու կերպարը: Խազաղեն դա հիմնավորում է նրանով, որ դեռ պարզ չէ, թե ինչպիսի վերջ է սպասում արցախյան հիմնախնդրին: Ըստ նրա, եթե բանը համնի պատերազմին, ապա այդ դեպքում հայերի հանդեպ թշնամու կերպարի բացակայությունը կնշանակի «ուսկի ենթարկել մարդկանց (ադրբեջանցիների) ևս մեկ սերունդ»<sup>32</sup>:

<sup>32</sup> Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны". – Ереван, Исследовательский центр "Регион" Журналистов-расследователей, 2005- стр 62.

Այսպիսով, մեր օրերում ուազմական հոգեբանության առջև ծառացած խնդիրները չեն սահմանափակվում միայն գինված ուժերով, այլ վերաբերում են նաև ողջ հասարակությանը: Մեր օրերում ուազմական հոգեբանության գերխնդիրն է մեկ ազգ, մեկ հայրենիք գաղափարով ամրապնդել հայության ազգային ինքնագիտակցությունը և ինքնապաշտպանական ներուժը: Վերջինս ենթադրում է. 1) գրագետ քարոզչությամբ արթուն պահել հայության հանդեպ Ադրբեջանի և Թուրքիայի թշնամական-սպառնալից կեցվածքի մասին հայ հասարակության, հատկապես երիտասարդության պատկերացումները՝ վերջիններիս մոտ ձևավորելով թշնամուն հաղթելու, բռնազավթված հայրենիքն ազատագրելու հավատ և պատրաստակամություն: 2) Երկրի բնակչության շրջանում ժխտողական դիրքորոշումներ ձևավորել «Եհովայի վկաներ» աղանդի հանդեպ, համոզիչ կերպով ներկայացնելով Հայաստանի անվտանգությանը և յուրաքանչյուր քաղաքացու կյանքին եհովականությունից բխող սպառնալիքը՝ այդ կերպ կանխելով դրա հետագա տարածումը: